ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2017 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2016

ՀՏԴ 373.1:809.198.1:891.0
ԳՄԴ 74.2+81.2Հ+83.3Հ
Հ282

Ուղեցույցի պատասխանատու՝ ՄԻՐՅԱ ՀԱԼԱՋՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի հայոց լեզվի, հայ գրականության ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի ներկա տարբերակում:

Հ 282 Հայոց լեզու և հայ գրականություն: Պետական ավարտական, միասնական և բանավոր քննությունների ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն

ԳՄԴ 74.2+81.2Հ+83.3Հ

ISPN 978 – 9939 – 842 – 06 – 6

©Գնահատման և թեստավորման կենտրոն 2016 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4
Թեստի կառուցվածքը..... 5
Առաջադրանքների կառուցվածքային տեսակները 6
Հնարավոր փոփոխություններ թեստերում ներառվող
առաջադրանքներում.....11
Թեստային առաջադրանքներում և հարցաթերթերում
ընդգրկվող նյութը 12
Հայոց լեզու 12
Հայ գրականություն 16
Հեղինակներ և ստեղծագործություններ 19
Պատասխանների ձևաթուղթը 29
Կենտրոնացված (բանավոր) քննություն..... 30
Հանձնարարվող գրականություն 31

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են 2017 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տեսակների համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների՝ ձևաթղթում լրացման կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթուղթը, կենտրոնացված (բանավոր) քննության հարցաթերթի նմուշ:

Հայոց լեզվի և հայ գրականության շտեմարանները, պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը և կենտրոնացված (բանավոր) քննությունների հարցաթերթերը կազմվում են համաձայն ուղեցույցի:

Քննական թեստերի առաջադրանքները կազմվում են «Շտեմարանների» հիման վրա. մասնավորապես՝ պարտադիր պահպանվում են շտեմարանների բառանյութը, նախադասությունները, պնդումների ձևակերպումները, գրականության հարցադրումները և նրանց վերաբերող տարբերակները, սակայն առաջադրանքների կառուցվածքային ամբողջականության պահպանումը քննական թեստում պարտադիր չէ:

ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Միասնական քննության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից և պարունակում է 70 առաջադրանք՝ 45-ը Ա, 25-ը՝ Բ մակարդակում: Թեստի ընդհանուր միավորը 80 է. Ա մակարդակինը՝ 50, Բ-ինը՝ 30: Ա մակարդակի առաջադրանքներից հավաքած միավորներով ձևավորվում է ավարտական, Ա և Բ մակարդակներից հավաքած միավորներով՝ միասնական գնահատականը: Ավարտական թեստը պարունակում է միայն Ա մակարդակը: Թեստային առաջադրանքները ունեն հետևյալ 3 կառուցվածքային տեսակները՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և պնդումների փունջ՝ բաղկացած 6 պնդումներից: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր, պնդումների փնջի ճիշտ պատասխանին՝ առավելագույնը 6 միավոր:

Ե՛վ Ա, և՛ Բ մակարդակներում ընդգրկված են առաջադրանքներ կառուցվածքային բոլոր տեսակներից և բովանդակային բոլոր բաժիններից:

ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԻ ՀԱՍԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմաներ	Ընդամենը ամբողջ թեստում	Կառուցվածքային տիպերը							
		Ա մակարդակ					Բ մակարդակ		
		Ընտրովի	Կարճ			Պնդումների փունջ	Ընտրովի	Կարճ	Պնդումների փունջ
			Ընդամենը	I տեսակ	II տեսակ			I և II տեսակներ	
Հնչյունաբանություն	10	4	2	1	1	1 (6 պնդումներով)	3	1	1 (6 պնդումներով)
Բառագիտություն	11	4	2	1	1		4	1	
Ձևաբանություն	13	5	3	1/2	1/2		4	1	
Շարահյուսություն	13	6	2	1	1		4	1	
Կետադրություն	3	1	1	1/0	1/0		1	0	
Կապակցված խոսք ոճագիտություն, ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի մասին	3	1	1	1/0	1/0		0	1	
Հայ գրականություն	15	11	1	1/0	1/0		2	1	
Ընդամենը		32	12	6	6		18	6	

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ[1]

Կառուցվածքը: Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:
Ներկառուցվածքային տարատեսակները.
ա. Պարզ տիպի: Ձևակերպվում է հարցը, և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

Նմուշ. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *և*.**

1) վեր-լակ, պո-զիա, վայր-ջք, պատն-շ
2) երբևից-, ան-լանելի, միջօր-, նոր-կ
3) ան-րկբա, հն-աբան, բազմ-ռանգ, տի-զերք
4) առ-րես, շք-ղթ, ճյունագ-ս, մանր-

բ. Համապատասխանեցումով: Տրվում են լեզվական միավորների (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ և այլն) երկու խմբեր և այդ խմբերի միավորների համապատասխանեցումով կազմված պատասխանների տարբերակներ: Պետք է ընտրել պատասխանի այն տարբերակը, որում միավորների համապատասխանեցումը ճիշտ է:

Նմուշ. **Փակագծերում տրված բառերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Տատս թոնրի կողքին էր շարել նոր թխած (1.ջնարակները, 2. նկանակները):
բ. Ժամանակն այդպես էլ չսպիացրեց նրա հոգում մնացած (1.խարամը, 2.խարանը):
գ. Օրակարգում ներկայացված ոչ մի հարցի վերաբերյալ (1.միացյալ, 2.միասնական) որոշում չկայացվեց:
դ. Որոշվեց հիվանդի վիրահատությունը կատարել (1.տեղային, 2. տեղական) անզգայացումով:

1) ա - 2, բ - 1, գ - 2, դ - 1
2) ա - 1, բ - 1, գ - 2, դ - 2
3) ա - 1, բ - 1, գ - 1, դ - 1
4) ա - 2, բ - 2, գ - 2, դ - 1

[1] Ընտրովի պատասխանով այն առաջադրանքները, որոնցում պահանջվում է միավորների հաշվում, մեկ թեստում չեն կարող լինել 3-ից ավելին:

գ. Տրված նյութով: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն, ձևակերպվում է հարցը տվյալ նյութի վերաբերյալ, և տրվում են պատասխանի տարբերակները:

Նմուշ. **Ո՞ր բառը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:**

Գաճաճ մասրենու շառագունած մացառները զարդարել էին ժայռերի …… գագաթները:

1) ուռուցիկ
2) արևկող
3) մամռոտ
4) խոժոռ

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:
Ձևաթղթում լրացման կարգը: Տրված չորս վանդակներից նրանում, որը համապատասխանում է ընտրված տարբերակի համարին, դրվում է x նշանը, այսպես՝

	1
1	
2	
3	
4	X

2. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Կառուցվածքը: Տրվում է որևէ նյութ՝ բառաշարք, նախադասություն, տեքստ և այլն, և տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը՝ մեկ թիվ կամ մի քանի թվեր, պետք է գրել ինքնուրույն:

Ներկառուցվածքային տարատեսակները.
I տեսակ

Միավորների հաշվում: Անհրաժեշտ է հաշվել և գրել պահանջին համապատասխանող միավորների թիվը:

Տրվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է ըստ լեզվական միավորների տիպի՝ հետևյալ կերպ՝

- բառեր կամ բառակապակցություններ՝ 12,
- բառազույգեր՝ 8,
- նախադասություններ՝ 6,
- ավելի մեծ միավորի կազմում տրված հաշվման ենթակա միավորներ (օրինակ՝ տրված տեքստում գոյականների քանակը)՝ 10:

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:
Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը կարող է լինել միանիշ կամ երկնիշ թիվ: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:

Նմուշ 1. ***Տեսնել*** **անկանոն բայը խոնարհման համակարգի քանի՞ ձևում է անկանոնություն դրսևորում:**

33 | 1 | |

Նմուշ 2. **Բառակապակցություններից քանի՞սն են դարձվածք**.

ձեռքը բռնել, մարդ դարձնել, ձեռքը պինդ, տեղը դնել, սիրտը կախ, միտը պահել, ոտքերն ընկնել, ձեռնոց նետել, կրակ կտրել, թակարդն ընկնել, ջուրը գցել, սառույցը շարժվել:

36 | 1 | 2 |

II տեսակ

ա. <u>Համարների ընտրումով:</u> Անհրաժեշտ է ընտրել և գրել պահանջին համապատասխանող միավորների համարները: Տրվող միավորների քանակը չի կարող գերազանցել 9-ը:
Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը կարող է լինել մեկ թիվ, մի քանի թիվ՝ առավելագույնը՝ 6: Թվերի հերթականության պահպանումը պարտադիր չէ: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:
Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր միավորների համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Նմուշ. **Նշել այն բառերի համարները, որոնցում ածանցի հնչյունափոխություն կա.**

1. թռչնաբուծարան, 2. փորագրություն, 3. աներևութանալ, 4.կցակառույց, 5. վարչարարություն, 6. նախադրություն, 7. միջնաբերդ, 8. բուժօգնություն, 9. փախստական:

41 | 1 | 3 | 5 | 7 | 9 | |

բ. Վերադասավորումով: Անհրաժեշտ է վերադասավորել միավորների համարները՝ ըստ պահանջի: Միավորների քանակը չի կարող գերազանցել 6-ը:

Ձևաթղթում լրացման կարգը: Պատասխանը թվերի շարք է, որում թվերի հերթականության պահպանումը պարտադիր է: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թվանշան:
Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Նմուշ. **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Գետից բարձրանում է մշուշ
2. Դրախտ է նորից իմ հոգում
3. Հեքիաթըդ անվերջ օրորում
4. Նորից ես մանուկ եմ այսօր
5. Իլիկըդ խոսում է անուշ
6. Արևը հանգչում է հեռվում

42	4	2	6	1	3	5

3. Պնդումների փունջ

Կառուցվածքը: Որևէ թեմայի (լեզվական իրողություն) շուրջ տրվում են 6 պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ ***Ճիշտ է***, ***Սխալ է*** կամ ***Չգիտեմ***: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 6 միավոր:
Գնահատման չափանիշը: Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված ***Ճիշտ է*** կամ ***Սխալ է*** պատասխանի համար տրվում է մեկական միավոր: ***Չգիտեմ*** պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված ***Ճիշտ է*** կամ ***Սխալ է*** պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է, կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թիվը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:
Ձևաթղթում լրացման կարգը: Տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել x նշանը:

Նմուշ. **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Դերբայները չունեն ոչ մի քերականական կարգ:
2. Հայերենի դերբայները հինգն են:
3. Հարակատար դերբայը ունի ***ած*** վերջավորություն:
4. Ոչ բոլոր դեպքերում է բայական արմատով և ***ած***–ով կազմված բառը հարակատար դերբայ:
5. Հարակատար դերբայը գոյականաբար գործածվելիս կարող է հոլովվել, հոդ ստանալ և հոգնակի կազմել:
6. ***<u>Ծառահատված</u> տարածք*** բառակապակցության մեջ ընդգծված բառը հարակատար դերբայ չէ:

70

	Ճիշտ է	Սխալ է	Չգիտեմ
1		x	
2		x	
3	x		
4	x		
5	x		
6		x	

ՀՆԱՐԱՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՍՏԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ

2017 թվականին քննական թեստերում շտեմարանային առաջադրանքները կարող են ներառվել որոշ փոփոխություններով՝ պահպանելով առաջադրանքի տեսակը և կառուցվածքը: Այսպես՝ նույն բովանդակությամբ տարբեր առաջադրանքներից պատասխանի տարբերակների համադրումով կարող է ձևավորվել նոր առաջադրանք՝ ըստ հետևյալ օրինակում ցույց տրված սկզբունքի:

Շտեմարանային առաջադրանքներ.

Առաջադրանք 1. **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *օ.***
1) աման-ոյա, հ-գուտ, սալոր-ոի, հ-դս ցնդել [2]
2) մեղմ-ոոր, ամեն-ոյա, այդ-ոինակ, գիշերուզ-ո
3) ցայս-ո, վաղ-ոդայն, տն-ոինեք, ան-ոեն
4) բար-ոություն, հ-գուդ, նախ-ոե, հանապազ-ոյա

Առաջադրանք 2. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ.***
1) -թյակ, տն-ոեն, օրոստ-ոե, օր-ո
2) աման-ոյա, քնքշ-ոոր, բաց-թյա, թիկն-թոց
3) բար-ոություն, ջր-ոինեք, հ-գուտ, հ-դս ցնդել
4) հանապազ-ոդ, բն-որան, նախ-ոե, ամեն-ոյա

Առաջադրանք 3. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ.***
1) վաղ-ոոք, ան-տարելի, օր-ոոց, մեղմ-ոոր
2) թիկն-թոց, տափ-ղակ, վեհ-ոեն, գիշեր-թիկ
3) գիշերուզ-ո, բն-որան, միջ-ոե, ան-գուտ
4) աման-ոյա, դեղնազ-ծ, բաց-թյա, ան-թևան

Առաջադրանք 4. **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ.***
1) մի-ոինակ, ան-ոեն, միջ-ոե, ն-ոեկ
2) մեր-ոյա, տն-ոինել, լոջ-ոեն, կես-ո
3) նախ-ոյակ, ջրվ-ո, բար-ոություն, օրեց-ո
4) տն-ոինեք, ցայս-ո, արճճազ-ծ, բաց-թյա

Նոր առաջադրանք **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ.***
1) աման-ոյա, հ-գուտ, սալոր-ոի, հ-դս ցնդել
2) -թյակ, տն-ոեն, օրոստ-ոե, օր-ո
3) թիկն-թոց, տափ-ղակ, վեհ-ոեն, գիշեր-թիկ
4) տն-ոինեք, ցայս-ո, արճճազ-ծ, բաց-թյա

Նման փոփոխություններ հնարավոր են ոչ միայն ընտրովի պատասխանով առաջադրանքներում, այլև մյուս կառուցվածքային տեսակներում՝ և՛ կարճ պատասխանով առաջադրանքներում, և՛ պնդումների փնջում:

[2] Գունավորվածները նոր առաջադրանքում ներառված տարբերակներն են:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Թեստային առաջադրանքները կազմվում են հիմնական դպրոցի «Մայրենի» 5-րդ, 6-րդ, «Հայոց լեզու» 7-րդ, 8-րդ, 9-րդ և ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքերի 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարանների դասագրքերում ամփոփված ծրագրային նյութի հիման վրա:

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուղղագրություն և ուղղախոսություն

Ձայնավորների արտասանություն և ուղղագրություն
Բաղաձայնների ուղղագրություն
Բաղաձայնների տեսակները*[3]
Երկհնչյունների ուղղագրություն
Կրկնակ բաղաձայնների, **և** - ի, յ ձայնակապի ուղղագրություն
Մեծատառով գրություն
Բառերի բաղադրիչների՝ գծիկով, անջատ կամ միասին գրություն

Բառերի այբբենական դասավորություն, տառերի թվային արժեք
Վանկ, շեշտ
Ձայնավորների և երկհնչյունների հնչյունափոխություն

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Իմաստաբանություն

Բառ, բառիմաստ, բազմիմաստություն
Բառի փոխաբերական իմաստ
Դարձվածքներ
Հոմանիշներ
Հականիշներ
Համանուններ
Հարանուններ

Բառակազմություն

Արմատ և ածանց, նախածանցներ և վերջածանցներ
Բառերի տեսակներն ըստ կազմության. պարզ, բարդ, ածանցավոր, բարդածանցավոր բառեր
Կրկնավոր, հարադրական, հոդակապով և անհոդակապ բարդություններ Հապավումներ.
տեսակները

[3] Աստղանիշով տրված թեմաները վերաբերում են միայն բանավոր քննությանը:

Բառապաշար

Բառապաշարի շերտեր. հնաբանություններ, օտարաբանություններ

Բառագործածություն

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմք և վերջավորություն, ձևույթներ

Խոսքի մասեր

Գոյական. հատուկ և հասարակ, անձնանիշ և իրանիշ գոյականներ, գոյականի որոշյալ և անորոշ առումներ, գոյականի թիվը, հոգնակիի կազմությունը. անեզական և անհոգնական, հավաքական գոյականներ, գոյականի հոլովումները[4]՝ ներքին, արտաքին, այլաձև, գոյականի հոլովները

Ածական. տեսակները՝ որակական և հարաբերական. որակական ածականների համեմատության աստիճանները

Թվական. տեսակները՝ քանակական, դասական, բաշխական, կոտորակային

Դերանուն. տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական. դրանց քերականական հատկանիշները, հոդեր

Բայ. բայի կազմությունը. բայածանցներ, բայի սեռը, դերբայներ (անկախ դերբայներ) և ձևաբայեր (կախյալ դերբայներ) խոնարհման տեսակները (ա, ե), դիմավոր ձևեր (դեմք, թիվ, ժամանակ, եղանակ), բայի խոնարհումը՝ դրական և ժխտական, բայի խոնարհման հարացույցը (պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր), անկանոն և պակասավոր բայեր

Մակբայ. տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի. ընդհանրական մակբայներ

Կապ. նախադրություններ, հետադրություններ. կապերի հոլովառությունը

Շաղկապ. տեսակները՝ համադասական և ստորադասական, մենադիր, կրկնադիր և զուգադիր

Ձայնարկություն. տեսակները՝ զգացական, կոչական, նմանաձայնական

Վերաբերական. տեսակները՝ հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, սահմանափակման

Քերականական ճիշտ և սխալ ձևեր

Ձևաբանական վերլուծություն

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բառակապակցություն

Կապակցության միջոցներ և եղանակներ. շարադասություն, խնդրառություն, համաձայնություն

Նախադասություն

Նախադասության կառուցվածքային տեսակները՝ երկկազմ և միակազմ, համառոտ և ընդարձակ, թերի և լիակազմ

---

[4] Գոյականի հոլովումը որոշվում է նրա եզակի թվով:

Նախադասության անդամներ
Ենթակա. արտահայտությունը
Ստորոգյալ. տեսակները՝ պարզ և բաղադրյալ. դրանց արտահայտությունը
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը
Գոյականական անդամի լրացումներ
Որոշիչ. արտահայտությունը
Հատկացուցիչ. արտահայտությունը
Բացահայտիչ. տեսակները՝ բուն, մասնական և մասնավորող պարագայական
Բայական անդամի լրացումներ
Խնդիրներ. տեսակները՝ ուղիղ, ներգործող, անջատման, հանգման, միջոցի, վերաբերության. դրանց արտահայտությունը
Պարագաներ. տեսակները՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, պատճառի, պայմանի, նպատակի, հիմունքի և զիջման. դրանց արտահայտությունը
Բազմակի անդամներ
Դերբայական դարձված
Նախադասության շարահյուսական վերլուծություն
Բարդ նախադասություն. տեսակները՝ համադասական և ստորադասական. բարդ ստորադասական նախադասությունների ենթատեսակները*
Գերադաս և ստորադաս նախադասություններ, դրանց կապակցումը (շաղկապներ և հարաբերական դերանուններ)
Ստորադաս նախադասության բնույթը (պաշտոնը)
Բարդ նախադասության գծապատկեր
Փոխակերպում. պարզ (դերբայական դարձվածով) և բարդ նախադասությունների, ուղղակի և անուղղակի խոսքի
Կետադրություն

ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պատկերավորման-արտահայտչական միջոցներ՝ մակդիր, համեմատություն, անձնավորում, փոխաբերություն, չափազանցություն, բաղաձայնույթ, շրջադասություն, հակադրություն
Գործառական ոճեր՝ առօրյա-խոսակցական, գիտական, վարչական, գեղարվեստական, հրապարակախոսական

ՇԱՐԱԴՐԱՆՔ (տեքստ)

Պարբերությունների կամ նախադասությունների դասավորում՝ ըստ տրամաբանական և քերականական հաջորդականության
Շարադրանքին (տեքստին) իմաստով հակասող (չհակասող), իմաստից բխող (չբխող) նախադասության հայտնաբերում

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառարանների տեսակները և նրանց կազմության սկզբունքները
Հայ խոշոր բառարանագիրներ և նրանց աշխատությունները. Մ. Սեբաստացի, Հր. Աճառյան, Ստ. Մալխասյանց, Հովհ. Բարսեղյան, Էդ. Աղայան, Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Ար. Ղարիբյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Հայերենի զարգացման փուլերը, արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային և քերականական տարբերությունները
Լեզուների ցեղակցությունը
Հայ և օտարազգի հայագետներ

Առաջադրանքներում չեն ընդգրկվի՝

Ուղղագրությունից և ուղղախոսությունից՝

1. ուղղագրական զուգաձևությունները
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը
3. օտար ծագմամբ հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը
4. տողադարձը

Բառագիտությունից՝

1. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումը
2. նույնարմատ և համահունչ համանունները
3. խոսակցական, հազվադեպ գործածվող, հնացած, դիպվածային, կեղծ գրական բառերը, հասարակաբանությունները
4. քարացած ածանցները
5. հարադրական բարդությունների տարբերակումը բառակապակցություններից
6. իսկական և կցական բարդությունների տարբերակումը
7. համառոտագրությունը

Ձևաբանությունից՝

1. սեռական հոլովը տրականից (բացի դերանվանական հոլովումից) և հայցականը ուղղականից և տրականից տարբերակելը
2. որակական և հարաբերական ածականների տարբերակումը
3. ժամանակաձևերի ոճական կիրառությունները
4. արգելական հրամայականի զուգաձևությունները
5. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը
6. վերաբերականների այն տեսակները, որոնք արտահայտում են ցուցադրում, հորդոր, խնդրանք, ափսոսանք, ուրախություն

Շարահյուսությունից՝

1. ըղձական նախադասությունը
2. հրամայական նախադասության արտահայտության ձևերը՝ բացի հրամայական եղանակով կազմվածներից և անդեմ նախադասություններից
3. առդրությունը
4. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը
5. սեռականով որոշչի և դերանվան որոշչի իմացությունը
6. բազմակի ստորոգյալը և միավորյալ նախադասությունը
7. մասնական ուղիղ խնդիրը
8. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից
9. համադասական նախադասության տեսակները
10. կետադրական զուգաձևությունները

Ոճագիտությունից ու տեքստաբանությունից՝

1. իրադրական, անհատական և հեղինակային ոճերը
2. գործառական ոճերի ենթատեսակները
3. շարադրանքի (տեքստի) տեսակները և կառուցվածքը
4. տեղեկատվական ժանրերը
5. գործնական գրությունները
6. լրատվական ժանրերը

Հայոց լեզվի մասին ընդհանուր գիտելիքից՝

1. գրաբարի, միջին հայերենի, բարբառների քերականական առանձնահատկությունները
2. աշխարհաբարի ենթաշրջանները

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքները ներառում են հայ գրականության ավագ դպրոցի դասագրքերի այն նյութերը, որոնք ընդհանուր են բոլոր հոսքերի դասագրքերում, ինչպես նաև 7-9-րդ դասարաններում ուսումնասիրված այն ստեղծագործությունները, որոնք նշված են պարտադիր ընթերցանության ցանկում:

Շրջանավարտը կամ դիմորդը պարտավոր է ոչ միայն յուրացնել դպրոցական դասագիրքը, այլև կարդալ հանձնարարվող գեղարվեստական գրականությունը և անգիր սովորել այն բանաստեղծություններն ու հատվածները, որոնք նախատեսվում են ուղեցույցում զետեղված ցանկով:

Շատ կարևոր է հայ գրականությունից քննական թեստերում ընդգրկվող

նյութի սահմանների որոշարկման խնդիրը: Ավագ դպրոցի հումանիտար և ընդհանուր, բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագրքերը գրողների և նրանց ստեղծագործությունների ընդգրկման առումներով ունեն զգալի տարբերություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ թեստերում կարող են ընդգրկվել միայն այն գրողները և այն ստեղծագործությունները, որոնք ընդհանուր են ավագ դպրոցի բոլոր հոսքերի դասագրքերում: Ավագ դպրոցի միայն մեկ հոսքի դասագրքում ներառված, սակայն հայ գրականության դասական բարձրարժեք նմուշներ համարվող մի քանի ստեղծագործության համար բացառություն է արվել՝ դրանք ընդգրկելով պարտադիր ընթերցանության կամ անգիր սովորելու համար հանձնարարվող ցանկերում: Մյուս կողմից, քանի որ հայ գրականության հետ ծանոթությունը ոչ թե ավագ դպրոցից է սկսվում, այլ ավելի վաղ, մի շարք հեղինակներ և առանցքային ստեղծագործություններ ներառված են 7-9-րդ դասարանների հայ գրականության ծրագրերից, ինչպես՝ Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը», Նար-Դոսի «Ես և նա»-ն, Ա. Բակունցի «Սպիտակ ձին» և մի շարք այլ նշանավոր երկեր: Այդ պատճառով նպատակահարմար է գտնվել առաջադրանքներում ընտրողաբար ներառել նաև հիմնական դպրոցի 7-9-րդ դասարանների՝ հայ գրականության դասագրքերի նյութերից:

Ուղեցույցում նշված՝ պարտադիր ընթերցանության և անգիր հանձնարարվող ստեղծագործությունների վերաբերյալ կարող են տրվել թեմատիկ-բովանդակային տարաբնույթ հարցեր: «Ընդհանուր իմացության համար» այնուկում նշված ստեղծագործությունների վերաբերյալ կարող են տրվել միայն ընդհանուր, ճանաչողական բնույթի հարցեր: Այսպես՝ դիմորդը պարտավոր է իմանալ, որ «Վարք Մաշտոցի» երկը հեղինակել է V դարի պատմիչ Կորյունը, որ այն պատկանում է վարքագրության ժանրին և ներկայացնում է Մաշտոցի կյանքի կարևորագույն դրվագները: Սակայն այդ երկի կառուցվածքի իմացություն կամ որևէ հատվածի ճանաչում նրանից չի կարող պահանջվել: Կամ՝ նույն կերպ նա պարտավոր է պատասխանել այն հարցին, թե ով է գրել «Հառաչանքը», ինչ ժանրի ստեղծագործություն է, սակայն այդ երկից թեմատիկ-բովանդակային հարցեր չեն կարող առաջադրվել:

Դասագրքերում սոսկ թվարկված, սակայն ուղեցույցում չնշված ստեղծագործությունների վերաբերյալ հարցեր չեն կարող տրվել:

Դասագրքերում առկա «Նորագույն շրջանի հայ գրականություն», «Սփյուռքահայ գրականություն», «Օտարագիր հայ գրողներ» բաժինների վերաբերյալ կարող են տրվել միայն հետևյալ տիպի հարցեր՝ գրողի ճանաչում, նրա ժամանակաշրջանի և ստեղծագործական միջավայրի իմացություն:

Հայ գրականության նյութի իմացությունը ստուգվում է հետևյալ շրջանակներում՝

1. հայ գրականության հիմնական շրջափուլերի, արևելահայ և արևմտահայ հատվածների և դրանց առանձնահատկությունների իմացություն, գրողի ապրած ժամանակաշրջանի ճանաչում,

2. հայ մշակույթի և գրականության նշանավոր իրադարձությունների, կրթօջախների, պարբերականների կատարած դերի, հիմնադրման տարեթվերի իմացություն,
3. գրողների կենսագրական կարևորագույն տվյալների, ծննդյան և մահվան թվականների իմացություն, կեղծանվամբ հայտնի հեղինակների իսկական անուն-ազգանունների ճանաչում, գրողների ծավալած գրական-հասարակական գործունեության իմացություն,[5]
4. գրողի ստեղծագործության ընդհանուր բնութագրի իմացություն, կարևորագույն երկերի, ժողովածուների, հոդվածների վերնագրերի, դրանց ընդհանուր բովանդակության, ինչպես նաև ստեղծման տարեթվերի (երբեմն՝ ժամանակաշրջանի), սկզբնաղբյուրների, ստեղծման շարժառիթների իմացություն, թեմատիկ, ժանրային և կառուցվածքային բնորոշում,
5. ստեղծագործությունների գլխավոր հերոսների անունների, նրանց բնութագրական հատկանիշների, այլ հերոսների հետ ունեցած առնչությունների, միջավայրի իմացություն,
6. գրական երկի սյուժեի, նրա կարևորագույն դրվագների իմացություն, ստեղծագործության որևէ առանցքային հատվածի, բնութագրական որևէ խոսքի (հերոսների կամ հեղինակի) ճանաչում,
7. տարբեր ստեղծագործությունների առնչությունների իմացություն,
8. հեղինակի կամ նրա ստեղծագործության վերաբերյալ որևէ նշանավոր ասույթի, բնութագրական խոսքի ճանաչում,
9. անգիր հանձնարարվող նյութի իմացություն (տողերի դասավորություն, բաց թողնված որևէ բառի կամ տողի տեղադրում, բանաստեղծության տողերի կամ տների քանակի իմացություն),
10. գրական ուղղությունների, դրանց հիմնական առանձնահատկությունների իմացություն, գրողի դավանած գրական ուղղության ճանաչում,
11. գրական տեսակների (ժանրերի), չափածոյի տաղաչափական կառուցվածքի, բանաստեղծական կայուն ձևերի (հայրեն, սոնետ, տրիոլետ, գազել, քառյակ և այլն) ճանաչում, դրանց տարբերիչ գծերի իմացություն:

---

[5] Հատկապես կարևորվում է այն գրողների կենսագրական տվյալների իմացությունը, որոնք առավել նշանակալի դեր են կատարել հայ գրականության պատմության մեջ (օրինակ՝ Գրիգոր Նարեկացի, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Վ. Տերյան, Ե. Չարենց և այլք): Նշված գրողների ոչ միայն ծննդյան և մահվան տարեթվերի, այլև կյանքի նշանակալի դրվագների իմացությունը կարևոր է հայ գրական-գեղարվեստական գործընթացի առավել ճիշտ և ամբողջական ընկալման համար:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ	ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
	ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՆԳԻՐ ԻՄԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Մովսես Խորենացի	1. «Հայոց պատմություն»-ից Հայկի և Բելի, Արա Գեղեցիկի և Շամիրամի, Վահագնի, Տիգրանի և Աժդահակի, Արտաշեսի և Արտավազդի մասին 2. «Ողբ» 3. Գիրք երրորդ, գլուխ ԽԷ. «Երանելի Մեսրոպի մասին», գլուխ ԾԲ. «Դանիելյան նշանագրերի մասին», գլուխ ԾԳ. «Մեսրոպյան նշանագրերի մասին, որ տրվեցին երկնային շնորհով»	1. «Թէպէտ և եմք ածու փոքր ……» բառերից մինչև «և արժանի գրոց յիշատակի» բառերը (գրաբար) 2. «Վահագնի ծնունդը» (գրաբար) 3. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշես ……» (գրաբար) 4. «Հեծաւ արի արքայն……» (գրաբար)	
Կորյուն			«Վարք Մաշտոցի»
Ագաթանգեղոս			« Հայոց պատմություն»
Փավստոս Բուզանդ			« Հայոց պատմություն»
Եղիշե			«Վարդանի և հայոց պատերազմի մասին»
Ղազար Փարպեցի			«Հայոց պատմություն»
«Սասնա ծռեր»-ի համահավաք բնագիրը՝ «Սասունցի Դավիթ» խորագրով			

Գրիգոր Նարեկացի	1. «Տաղ Վարդավառի» 2. «Մեղեդի ծննդյան» 3. «Մատյան ողբերգության», բան Գ, հատված Բ («Նորակերտ մատ-յանն այս ողբերգության…» տողից մինչև «Հանապազ մեծիդ բարե-գթության դիմելու համար» տողը), բան ԺԷ, հատված Ա («Աղաչում եմ քեզ՝ բոլոր չարաչար ու տաժանե-լի…» տողից մինչև «Մեծդ փոքրիս հետ, լույսդ՝ խավարիս…»)	1. «Տաղ Վարդավառի» 2. «Մեղեդի ծննդյան» (հումանիտար հոսքի դասագրքում ընդգրկված գրաբար հատվածները)	
Մխիթար Գոշ	1. «Արջ և մրջյուն» 2. «Բամբակենին և Սոսին» 3. «Աստղերը և Լուսինը» 4. «Ոսկին և Ցորենը»		«Դատաստանագիրք»
Վարդան Այգեկցի	1. «Իմաստուն զինվոր» 2. «Իշխան և այրի կին» 3. «Եզը և ձին»		
Ֆրիկ	1. «Գանգատ» 2. «Բան պիտանի»	Հատված «Գանգատ»-ից («Մէկն ի պապանց պարոնորդի» տողից մինչև «Մէկին հալալն կորուսի» տողը)	
Նահապետ Քուչակ	1. «Եկին ու խապար բերին» 2. «Փողոցովդ ի վար կուգի» 3. «Երեկ ցորեկով բարով» 4. «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ» 5. «Ժամ-ժամ զիմ ղարիպութինս» 6. «Կելնեմ, կուգամ, մանկտի՛ք» 7. «Ես շեֆթալուի մորճ մ’էի»	1. «Ես աչք ու դու լոյս, հոգի՛» 2. «Քանի՞ ու քանի՞ ասեմ, զիմ եարին…» 3. «Երբ սէրն ի յաշխարհ եկաւ»	

Սայաթ-Նովա	1. «Դուն էն գլխեն իմաստուն իս» 2. «Աշխարումս ախ չիմ քաշի» 3. «Թամամ աշխար պտուտ էկա» 4. «Աշխարս մե փանջարա է»		
Խ. Աբովյան	«Վերք Հայաստանի». «Հառաջաբանը», առաջին և երրորդ գլուխները		1. «Պարապ վախտի խաղալիք» 2. «Առաջին սերը» 3. «Թուրքի աղջիկը» 4. «Նախաշավիղ կրթության»
Մ. Նալբանդյան	1. «Իտալացի աղջկա երգը» 2. «Մանկության օրեր»	1. «Ազատություն» 2. «Իտալացի աղջկա երգը» (առաջին 8 քառատողը)	1. «Ապոլլոնին» 2. «Վազող ջրին» 3. «Երկու տող» 4. «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» 5. «Կրիտիկա»
Պ. Դուրյան	1. «Սիրել» 2. «Տրտունջք»	1. «Լճակ» 2. «Իմ ցավը»	
Ռաֆֆի	«Սամվել»		1. «Խենթը» 2. «Կայծեր» 3. «Ջալալեդդին» 4. «Դավիթ-Բեկ» 5. «Ոսկի աքաղաղ»
Հ. Պարոնյան	«Մեծապատիվ մուրացկանները»		1. «Քաղաքավարության վնասները» 2. «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» 3. «Ազգային ջոջեր» 4. «Հոսհոսի ձեռատետրը» («Իմ ձեռատետրը») 5. «Ծիծաղ» 6. «Պաղտասար աղբար»

Մուրացան	«Գեորգ Մարզպետունի»		1. «Խորհրդավոր միանձնուհի» 2. «Նոյի ագռավը» 3. «Առաքյալը» 4. «Ռուզան»
Շիրվանզադե	1. «Քառս» 2. «Պատվի համար» 3. «Արտիստը»		1. «Նամուս» 2. «Չար ոգի» («Ցավագարը»)
Նար-Դոս	1. «Ես և նա» 2. «Նեղ օրերից մեկը»		1. «Մեր թաղը» պատմվածաշարը*[5] 2. «Սպանված աղավնին»
Գ. Զոհրապ	1. «Այինկա» 2. «Զաբուղոն» 3. «Փոստալ» 4. «Այրին» 5. «Ճիտին պարտքը»		«Երջանիկ մահը»*
Հ. Թումանյան	1. «Հայրենիքիս հետ» 2. «Անուշ» 3. «Թմկաբերդի առումը» 4. «Փարվանա» 5. «Գելը» 6. «Գիքորը» 7. «Քաջ Նազար»	1. «Անուշ» (նախերգանք) 2. «Թմկաբերդի առումը» (նախերգանք) 3. «Փարվանա» («Էապես անցան շատ տարիներ….» տողից մինչև վերջ) 4. «Հայոց լեռներում» 5. քառյակներից՝	1. «Հառաչանք» 2. «Հոգեհանգիստ»* 3. «Հայոց վիշտը»*

[6] Այս բաժնում աստղանիշով տրվածները բանավոր քննություն հանձնողների համար հանձնարարվում են որպես ընթերցանության նյութեր:

		«Տիեզերքում աստվածային…» «Կյանքս արի հրապարակ», «Իմ կնունքին…» «Բերանն արնոտ մարդակերը էն անբան…» «Աշնան ամպին ու զամպին» «Ամեն մի սիրտ…» «Հե՜յ ագահ մարդ» «Հին աշխարհքը ամեն օր» «Հիմի բացել են հանդես» «Լիներ հեռու մի անկյուն» «Ինչքան ցավ եմ տեսել ես» «Երկու շիրիմ իրար կից»	
Ավ. Իսահակյան	1. «Սև-մութ ամպեր» 2. «Է՜յ, ջան-հայրենիք» 3. «Օտար, ամայի ճամփեքի վրա» 4. «Մեր պատմիչները և մեր գուսանները» 5. «Հայրենիքիս» («Ցորենի ծփուն արտերի միջին») 6. «Հավերժական սերը» 7. «Հայրենի հողը» 8. «Աբու-Լալա Մահարի» 9. «Լիլիթ» 10. «Համբերանքի չիբուխը» 11. «Սաադիի վերջին գարունը»	1. «Ռավեննայում» 2. «Արագածին» 3. «Մի մրահոն աղջիկ տեսա» 4. «Աբու-Լալա Մահարի»՝ «Երրորդ սուրահ»-ի սկզբից 22 տող (մինչև «…և դարձնում աշխարհն ահավոր ջեհնեմ» տողը)	1. «Դա՛ղդս լացեք» 2. «Ասպետի սերը»

Դ. Վարուժան	1. «Հարճը» 2. «Արտերուն հրավերը»	1. «Ձոն» 2. «Հունձք կը ժողվեմ» 3. «Ցորյանի ծովեր»	1. «Հիվանդ է» 2. «Նեմեսիս» 3. «Անիի ավերակներուն մեջ» 4. «Կիլիկյան մոխիրներուն» 5. «Ջարդը»* 6. «Նավասարդյան» 7. «Առաջին ծիլեր»
Լ. Շանթ	«Հին աստվածներ»	«Հին աստվածներ»-ից «Իջե՛ք, իջե՛ք, երազնե՛ր» հատվածը	
Սիամանթո			1. «Դ-յուցազնորեն» 2. «Հայորդիներ» 3. «Հոգեվարքի և հույսի ջահեր»
Մ. Մեծարենց	1. «Արևին» 2. «Նավակներ» 3. «Հյուղը»	1. «Վայրկյան» 2. «Սիրերգ» («Գ-իշերն անույշ է…») 3. «Աքասիաներու շուքին տակ»	1. «Ձմրան պարզ գիշեր»* 2. «Մեղուները»* 3. «Իրիկունը»* 4. «Տո՜ւր ինձի, Տեր...»* 5. «Հովը»*
Վ. Տերյան	1. «Աշնան մեղեդի» 2. «Ոսկեհանդերձ եկար» 3. «Իմ խաղաղ երեկոն է հիմա» 4. «Կարուսել» 5. «Հրաժեշտի գազել» 6. «Որպես Լաերտի որդին» 7. «Իջնում է գիշերն անգութ ու մթին» 8. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»	1. «Տխրություն» 2. «Fatum» 3. «Գարուն» 4. «Մի՞թե վերջին պոետն եմ ես» 5. «Կարծես թե դարձել եմ ես տուն»	1. «Աշնան երգ»* 2. «Գարնանամուտ»* 3. «Հայ գրականության գալիք օրը»

Ե. Չարենց	1. «Տաղարան» շարքը 2. «Անվերնագիր» («Իմ մահվան օրը…») 3. «Մահվան տեսիլ» («Որպես լքված թավջութակի…») 4. «Դանթեական առասպել» 5. «Ամբոխները խելագարված» 6. «Գանգրահեր տղան» 7. «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» 8. «Դեպի լյառը Մասիս» 9. «Հարդագողի ճամփորդները»	1. «Վահագն» 2. «Ես իմ անուշ Հայաստանի…» 3. «Տաղ անձնական» 4. «Հեռացումի խոսքեր»	1. «Թուղթ բանաստեղծ բարեկամիս» 2. «Սոմա»
Դ. Դեմիրճյան	1. «Վարդանանք» 2. «Ավելորդը»		
Ա. Բակունց	1. «Մթնաձոր» 2. «Խոնարհ աղջիկը» 3. «Միրհավ» 4. «Ալպիական մանուշակ» 5. «Սպիտակ ձին» 6. «Մթնաձորի չարքը»*		1. «Կյորես» 2. «Ծիրանի փողը»*
Ստ. Զորյան*	1. «Խնձորի այգին»* 2. «Պատերազմը»*		

Կ. Զարյան			«Նավը լեռան վրա»
Շ. Շահնուր	«Նահանջը առանց երգի»		
Գ. Մահարի	«Ծաղկած փշալարեր»		«Այրվող այգեստաններ»
Ն. Զարյան	«Արա Գեղեցիկ»		
Հ. Շիրազ	1. «Մայրս» 2. «Մայրս փոքրիկ…» 3. «Բիբլիական»	1. «Թագադրում» 2. «Գարնանամուտ» 3. «Հայ ժողովրդի երգը» 4. «Կուզեի նստել մի քարի վրա» 5. «Էքսպրոմտ»	
Հ. Սահյան	1. «Իջավ սարյակը դաշտում» 2. «Քարափը» 3. «Մասրենի» 4. «Անձրև» 5. «Պապը» 6. «Չես ասի ոչ մի բառով» 7. «Անունդ տալիս» 8. «Ախր ես ինչպես…»	1. «Անտառում» 2. «Օրը մթնեց…»	
Պ. Սևակ	1. «Անլռելի զանգակատուն» 2. «Վարք մեծաց» 3. «Առաջադրանք համայն աշխարհի…» 4. «Մարդ էլ կա, մարդ էլ» 5. «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»	«Անլռելի զանգակատուն» պոեմից երկու հատված («Ղողանջ եղեռնական». սկսած «Գարուն էր: Չեկած ամառ…» տողից մինչև 26-րդ տողը, «Ղողանջ հրաշագործման». սկիզբը՝ 13 տող)	

Հ. Մաթևոսյան	1. «Նարինջ զամբիկը» 2. «Աշնան արև» 3. «Կանաչ դաշտը»		«Բեռնաձիեր» շարքը*
Վ. Սարոյան[7]	«Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը»		

Անգիր հանձնարարվող ստեղծագործություններ հիմնական դպրոցի գրականության դասագրքերից

Ռ. Պատկանյան	«Օրորոցի երգ»
Գ. Դոդոխյան	«Ծիծեռնակ»
Ս. Շահազիզ	«Երազ»
Ս. Կապուտիկյան	«Խոսք իմ որդուն»

[7] Նկատի ունենալով Վ. Սարոյանի նշանակալից տեղը համաշխարհային գրականության ասպարեզում, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրա «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը» պատմվածքը ուսումնասիրվում է հիմնական դպրոցում՝ այդ ստեղծագործությունը ներառված է ընթերցանության ցանկում:

Հեղինակներ ընդհանուր իմացության համար

Նորագույն շրջանի գրողներ	Սփյուռքահայ գրողներ	Օտարագիր հայ գրողներ
1. Մ. Մարգարյան 2. Ս. Կապուտիկյան 3. Գ. Էմին 4. Հ. Հովհաննիսյան 5. Վ. Դավթյան 6. Ռ. Դավոյան 7. Լ. Կամսար 8. Մ. Արմեն 9. Վ. Անանյան 10. Խ. Դաշտենց 11. Ս. Խանզադյան	1. Հ. Օշական 2. Վ. Թեքեյան 3. Հ. Մնձուրի 4. Համաստեղ 5. Վ. Շուշանյան 6. Մ. Իշխան 7. Ա. Ծառուկյան 8. Հ. Կարապենց	1. Վ. Սարոյան 2. Լ. Զ. Սյուրմելյան

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ[8]



[8] Ձևաթղթում տեղ է հատկացված սխալ նշված պատասխանները փոխելու համար: Ընտրովի պատասխանով առաջադրանքների կամ պնդումների փնջի որևէ պնդման պատասխանը փոխելու համար համապատասխան տեղերում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և սյունակի համապատասխան վանդակում դրվում է x նշանը: Կարճ պատասխանով առաջադրանքի դեպքում համապատասխան տեղում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և լրացվում են թվերը: Այս առաջադրանքների համար տրված են 2 վեցվանդականի տեղեր: Դրանք նախատեսված են և՛ I, և՛ II տեսակների համար:

ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՆՄՈՒՇ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
2017 Թ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ N …

1. Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» արծարծված հիմնախնդիրները
2. Հ. Սահյանի քնարերգության ընդհանուր բնութագիրը. «Օրը մթնեց» (արտասանել անգիր), «Պապը» բանաստեղծությունները (ևս 2-3 բանաստեղծություն դիմորդի ընտրությամբ)
3. Հայերենի անորոշ և համակատար դերբայները. նրանց կազմությունը, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները
4. Նախադասության վերլուծություն

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ……

4-ՐԴ ՀԱՐՑԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՆՄՈՒՇ

N …

Արտագրել նախադասությունը, կազմել գծապատկերը, վերլուծել ձևաբանորեն և շարահյուսորեն:

Երեկոյան, երբ անակնկալ պատահած ինչ-որ հորդաբուխ աղբյուրի մոտ բանակը կանգ առավ գիշերելու, Զաքարիան մի փոքրիկ ջոկատ ուղարկեց, որ մոտակա որևէ գյուղից սննդամթերք և ուղեկցորդ ճարի, որովհետև կարծում էր, թե շեղվել են ճանապարհից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով:

Յուրաքանչյուր հարցի համար տրվում է առավելագույնը 5 միավոր:

Գնահատականի հետ անհամաձայնության դեպքում դիմորդին տրվում են հարցեր նախագահի կողմից ուղեցույցով նախատեսված ծրագրի շրջանակներում: Դիմորդը կարող է բողոքարկել գնահատականը մինչև քննասենյակից դուրս գալը:

Հանձնարարվող գրականություն

1. Հանրակրթական դպրոցի 5-12-րդ դասարանների՝ ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված հայոց լեզվի և հայ գրականության դասագրքեր[9]:
2. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
3. Փ. Մեյթիխանյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Եր., 2013:
4. Ք. Սուքիասյան, Հայոց լեզվի դպրոցական դարձվածաբանական բառարան, Եր., 2013:
5. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:
6. Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների դպրոցական-ուսումնական բառարան, Եր., 2005:
7. Ք. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական ուսումնական բառարան, Եր., 2014:
8. Ռ. Շալունց, Համանունների դպրոցական բառարան, Եր., 1976:
9. Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Եր., 2011:

[9] Յուրաքանչյուր ուստարվա համար քննական թեստ կազմելիս պետք է նկատի ունենալ այն դասագրքերը, որոնցով ուսումնառություն են անցել տվյալ ուստարվա շրջանավարտները: